ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում փակագծերում նշված տառը:**

1) որևից-, հյուլ-, առ-ջ, առօր-ական **(ե)**
2) հա-շտապ, պա-ակ, անթացու-, ս-րդել **(պ)**
3) ըն-արմանալ, լեր-անալ, որ-նել, ար-մնի **(դ)**
4) թր-ոց, զի-ել, գո-ի, հաղար- **(ջ)**

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է տառերի և հնչյունների քանակը հավասար:**

1) անորոշ, հայորդի, վարազաորս
2) ովքեր, ցածրորակ, կտակարան
3) ապերջանիկ, կայսերապաշտ, ալեվարս
4) անընկեր, ակնբախ, բարձրանալ

3 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ, ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ
2) ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՓՐԱՏ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, ԺԱՆՆԱ ԴԸ ԱՐԿ
3) ԱԾՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ԼԱ ՄԱՆՇ, ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ
4) ՋՈՐՋ ԳՈՐԴՈՆ ԲԱՅՐՈՆ, ՄԵԾ ՄԱՍԻՍ, ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵ

4 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառերում *է(ե)* ձայնավորի հնչյունափոխություն կա:**

1) իշայծյամ, միգամած, գիսավոր, շիկակարմիր
2) իջևանատուն, կիզանուտ, գիշակեր, իգական
3) շինական, գիրուկ, հանդիսատես, տիրուհի
4) վիրահատել, հրձիգ, կիսանդրի, գիտակցաբար

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի *ը*-ն սխալ տեղադրված (տվյալ տեղում գաղտնավանկ չկա):**

1) խճճ(ը)վել, քն(ը)նել, խմբ(ը)վել
2) դռն(ը)բաց, տրտ(ը)մել, չընկ(ը)րկել
3) փրկ(ը)վել, կնճ(ը)ռոտ, կն(ը)կատի
4) համ(ը)ռանալ, հանգց(ը)նել, խառ(ը)նվածք

6 **Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

1) ***մի սանրի կտավ*** –միևնույն գործին նվիրված
2) ***ուրիշի երգը երգել*** –սեփական կարծիք չունենալով՝ ուրիշինը կրկնել
3) ***ձեռքը բռնել*** –արգելել, թույլ չտալ որևէ բան անել
4) ***ջուրը գցել*** –անօգուտ վատնել

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) վախճան, սխտոր, գլխարկ
2) գավաթ, նախիր, կոճակ
3) եղջյուր, խախուտ, պատվեր
4) խավար, կատակ, առաջ

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերն ընդհանուր արմատ ունեն:**

1) տարուբերում, տարբեր, մարդատար
2) սնամեջ, սնապարծ, սնոտի
3) գաղտնածածուկ, ծխածածկույթ, ծակուծուկ
4) ծառաբուն, բնույթ, բնավեր

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերը թավ գրված բառի (բառաձևի) հետ բառակապակցություն կազմելիս կարտահայտեն միայն փոխաբերական իմաստ:**

1) ***խոսք*** - թթու, կցկտուր, մահացու
2) ***գիշեր*** - մահահոտ, ամենակուլ, դավաճան
3) ***ուռի*** - ամոթխած, սաղարթախիտ, վարսաթափ
4) ***աչքեր*** – կրակոտ, ծով, նշաձև

10 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:**

1) ատամնաբուժարան, արձակագիր, մանկաբարձուհի, սերտաճում
2) պատմավեպ, հայրենանվեր, մատնահետք, սրտմտանք
3) տնտեսվարություն, ազատամարտիկ, պատվարժան, չվացուցակ
4) վերնախավ, դպրոցահասակ, բարեկեցիկ, քարանձավ

11 **Ո՞ր շարքում ածանցավոր բայ *չկա:***

1) սահմանազատել, կարկաչել, տեսնել, մթագնել
2) խթանել, փայլփլել, շրջապատել, բռնել
3) կանչել, դիպչել, կարոտել, կանգնել
4) կառչել, պոկոտել, մատնել, վրդովել

12 **Ո՞ր նախադասության մեջ սահմանական եղանակի բայ կա:**

1) Լիներ այնպես, որ քայլեր իր հայրենի դաշտերով ու ծաղիկների մեջ գլուխը թաղած՝ իր վերջին շունչը տար:
2) Մի՛ կարծիր, թե ահա այս զառիվերը կանցնես, քո վազքը կհեշտանա, էլ հետ չես նայի ու չես տեսնի նրան քո հետևից նայելիս:
3) Նա այլևս ոչ մի գիշեր դուրս չէր գա, որպեսզի չհանդիպեր այդ խորհրդավոր անծանոթին:
4) Մի մարդ խանութ ուներ և գիտեր՝ դրանով կվաստակի իր օրվա ապրուստը:

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

1) տեսաշար, ծաղկանախշ, շարասյուն, ճամփեզր
2) օրինագիծ, ժանր, թագակիր, խաչքար
3) հավատարմագիր, մարզատոն, ուղեցույց, հիվանդայց
4) մենապար, մեկնակետ, գիսաստղ, ձկնկուլ

14 **Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայ կա:**

1) Գետը վարարել էր ու իր հորձանքի մեջ առած ջրլող թռչունների երամը՝ շառաչյունով հոսում էր:
2) Հրավիրեցին բոլորին՝ դերասանների, լրագրողների, պաշտոնաթող գեներալների, իսկ իրեն մոռացան:
3) Առանց Թորիկի հետ խորհրդակցելու՝ նա մտավ մսագործ Ասատուրի, պատշար Օղասաբի, հացագործ Սիմոնի տները և բոլորից էլ մերժողական պատասխան ստացավ:
4) Հին ու հրաշալի մի արվեստ էր հառնում պատմության թրթռացող մշուշներից:

15 **Ո՞ր նախադասության մեջ դերանուն *չկա:***

1) Մայրը, վերջալույսի արևի շողերից աչքերը ձեռքով ծածկելով, նայում էր կածանի կեռումեռ պտույտին և սպասում, թե երբ են երևալու հարսն ու աղջիկը:
2) Արշակը սպարապետի հետ գնում է՝ շրջելու Շապուհի ախոռներում. այնտեղ պահվում էին ցեղական հազվագյուտ նժույգներ:
3) Այսօր բաց էին պատուհանների ապակե փեղկերը, և փողոցի տոթն առատորեն լցվում էր ներս:
4) Թագավորը տագնապած ու հուզախռով հայտնում է բոլորին, որ խուճապի մեջ չընկնեն և սպասեն նոր լուրերի:

16 **Ո՞ր նախադասությունը միակազմ *չէ:***

1) Բարելավել վերահսկողական աշխատանքները:
2) Տեսա երազ մի վառ, Ոսկի մի դուռ տեսա:
3) Ըստ ժողովրդական խոսքի՝ խելոքին՝ գերի, անգետին՝ ոչ սիրելի:
4) Մթնշաղ է. անձրևում է միալար:

17 **Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի:**

1) Ձորի բերանին կտրուկ զառիթափի տակ էր կանգնած եղբայրը գայլի համար լարված թակարդը ձեռքին:
2) Հողը չոր ու տեղ-տեղ ճաքճքած ագահորեն ներքաշում էր ջուրը:
3) Պատերազմը նոր էր վերջացել կամ դեռ չէր վերջացել հոր հագին բանակային շինել էր:
4) Հայրը երբ էր հնձել լանջի այդ խոտհարքը տղան չէր կարողանում հիշել:

18 **Ո՞ր նախադասության մեջ հիմունքի պարագա *չկա:***

1) Մեծ երգահանի կերպարը իր՝ Սևակի վկայությամբ վաղուց է եղել բանաստեղծի ստեղծագործական որոնումների կենտրոնում:
2) Քրմապետի խորհրդով նա որդուն տարավ աստվածների դուռը:
3) Մենակություն բառից դողում է օդն իմ սենյակի, Ու ես հասկանում եմ, Որ աչքերն են մարդու ամենաթաց տեղը:
4) Բաբելոնի զարդը կախովի այգիներն էին, որոնք, ըստ հույն պատմիչ Հերոդոտոսի, հիմնվել էին թագավորի սիրելի կնոջ համար:

19 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

1) *Աղջիկը պարտեզ մտնելուն պես վազում էր դեպի ծաղկանոցը:*
   Հենց որ աղջիկը պարտեզ էր մտնում, վազում էր դեպի ծաղկանոցը:
2) *Դվինի ողջ ժողովուրդը անհամբեր սպասում էր թագավորի՝ ապարանքից ելնելուն:*
   Դվինի ողջ ժողովուրդը անհամբեր սպասում էր թագավորին, որ ելնելու էր ապարանքից:
3) *Աշոտ թագավորի հաղթանակները ոգևորեցին իշխաններին միմյանց միջև եղած գժտությունները մոռանալ տալու աստիճան:*
   Աշոտ թագավորի հաղթանակներն այնքան ոգևորեցին իշխաններին, որ մոռանալ տվեցին միմյանց միջև եղած գժտությունները:
4) *Էթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է իր բնակիչների դյուրաբորբոք բնավորությամբ:*
   Էթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է նրանով, որ իր բնակիչները դյուրաբորբոք բնավորություն ունեն:

20 **Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



1) Նա պետք է որ ինձ ճանաչեր դեմքով և, բացի այդ, եթե նույնիսկ չճանաչեր, երբ մարդ տեսնում է մեկ ուրիշի՝ իրեն մոտենալը, պարտավոր է նրան գեթ սպասել:
2) Ես տեսել եմ այն նկարը, որում սուրբ Թովմասը մատը դրել է Քրիստոսի վերքի վրա, և հաճախ մտածել եմ այն մասին, որ սերը Աստծու նկատմամբ մարդու ունեցած հավատի հետ համեմատելու դեպքում կարող եմ ասել, որ նման եմ այդ սրբին:
3) Ես դողում էի այն մտքից, որ չլինի թե նրա մեջ դեռ պահպանված լինի նախկին վախը, և նկատում էի, որ իմ մեջ կատարվող փոփոխությունները կարող էին նրան կասկածամիտ դարձրած լինել, փոխել հիմնովին:
4) Ես չէի կարողանում ուշադրությունս կենտրոնացնել՝ տեսնելու, թե ինչ է կատարվում բեմի վրա և սրահում. այնքան վշտացած էի, որ, այսպես ասած, ապրում էի միայն ինձնով, և արտաքին աշխարհը չէր ազդում զգայարաններիս վրա:

21 **Ո՞ր տարբերակում անճնավորում կա:**

1) Մանկության երկինքն էր բացվել վրաս,
   Եվ արշալույսներ կային իմ հոգում:
2) Այն գիշերն է, այն հուշերն են տրտմաշուք,
   Այն աստղերն են ցուրտ երկնքում երազում:
3) Հրա՛շք աղջիկ, գիշերների՛ թագուհի,
   Ճառագայթող քո աչքերով դու եկար:
4) Երազի նման գիշեր է այսօր,
   Ու ձյուն է գալիս երազի նման.
   Ճերմակ են դարձել դաշտերը բոլոր.
   Մարմարե գիշեր՝ անեզր, անսահման:

22 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Կենդանատեսակների դասերի ամբողջական պատկերը ներկայացնելու համար կենսաբանները դրանցում ընդգրկում են նաև իրենց հայտնի անհետացած տեսակները, որոնց թվերը խիստ մոտավոր են:
2. Բանն այն է, որ երբեմն բնաջնջվում են ոչ միայն առանձին տեսակներ, այլև ամբողջական ընտանիքներ, նրանց հետքերն անգամ վերանում են. դրան հակառակ՝ զարգացման անընդհատ գործընթացում շարունակ առաջանում են նոր տեսակներ ու ցեղատեսակներ:
3. Կենդանական աշխարհը չափազանց բազմազան է, և դժվար թե մեկը կարողանա հաշվել բոլոր տեսակների ճշգրիտ թիվը և ահա թե ինչու:
4. Կենսաբաններին հայտնի է, որ նոր տեսակների առաջացումը նույնքան տարածված է, որքան որոշ կենդանատեսակների վերացումը, իսկ նոր տեսակների հաշվումը ևս խիստ բարդ գործընթաց է:

1) 3, 2, 1, 4
2) 4, 3, 1, 2
3) 3, 1, 2, 4
4) 4, 1, 3, 2

23 **Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ *չկա:***

1) Սանդուղքի վրա լսվեց վերև բարձրացող ինչ-որ մարդու ոտքերի ձայնը:
2) Հնդկեղեգի հիմքի հաստությունը սովորաբար 30 սմ-ից չի անցնում, սակայն որոշ հնդկեղեգներ աճում և հասնում են մինչև 40 մ բարձրության:
3) Գիտնականները հաշվի առան և այն հանգամանքը, որ Եգիպտոսում գինին համարվել է բացառիկ ըմպելիք:
4) Մեզ հաճելի է դիտել, թե ինչպես ջրածտերը թռչում են փրփուրի վրայով:

24 **Ո՞ր նախադասության մեջ ներգործող խնդիր կա:**

1) Ի՞նչ է պահանջվում գյուղի ղեկավարությունից. պահանջվում է, որ թույլ տան ձի պահել:
2) Երբ հոգնում էին օրվա հոգսերից, Փաթաթվում էին մի կաթիլ մութով, Երկինքներն էին մտնում երազի Եվ հատիկ-հատիկ աստղ էին ուտում:
3) Ժայռերի ստվերոտ կողերը մամուռով են պատված. ջրերը թռչում են վերև, հասնում նրանց:
4) Անուշ բույրերով հագեցած թմրաբեր օդից նա քայլում էր հաճելի մի գլխապտույտով:

25 **Գ. Զոհրապի նովելների վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ *չկա:***

1) Հուսեփ աղան մի օր դուրս է գալիս տնից և անհայտ կորչում քաղաքից՝ աղջիկներին թողնելով ծայրահեղ աղքատության մեջ: *(«Ճիտին պարտքը»)*
2) Զարդարը, հույսը կտրելով Մարտիրոսի վերադարձից, այլևս երբեք չի գնում այն արտը, որտեղից ճանապարհել էր ամուսնուն: *(«Այրին»)*
3) Պերճուհին վերադարձնում է Հակոբոսի նշանը և դառնում սևազգեստ և չամուսնացող աղջիկ: *(«Այինկա»)*
4) Զաբուղոնը գողություն է անում՝ ապրուստի միջոց հայթայթելու նպատակով: *(«Զաբուղոն»)*

26 **Ե. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Այդ բոլոր մարդիկ իմ մահվան բոթից,
Որպես ընդհանուր աղետից սարսած՝
Զարմացած կզգան ինձ այնքա՜ն մոտիկ
Եվ հանկարծ այնքա՜ն թանկ ու հարազատ:

1) «Մահվան տեսիլ»
2) «Տաղ անձնական»
3) «Դանթեական առասպել»
4) «Անվերնագիր»

27 **Ա. Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

«Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակը անասելի թափով իջավ կնոջ թիկունքին»:

1) «Միրհավ»
2) «Խոնարհ աղջիկը»
3) «Մթնաձոր»
4) «Ալպիական մանուշակ»

28 **Տրված հատվածներից ո՞րն է Վ. Տերյանի «Fatum» բանաստեղծությունից:**

1) Այնպես գգվող է երեկոն անափ,
   Ծաղիկներն այնպես նազով են փակվում:
2) Անունդ թող փարոս լինի ինձ
   Սուտ կյանքի և դառը մահու դեմ:
3) Թող կիտվի խավարն ավելի խրթին,
   Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ:
4) Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,
   Օղակելով լույս աստղերը մեկմեկու:

29 **Ո՞ր հատվածը Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմից *չէ:***

1) Աշխարհքում հաստատ չկա ոչ մի բան,
   Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին.
   Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,
   Ոչ սիրած կնկա տված բաժակին:
2) Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին.
   Նա՝ կավատ, վարար, մի չքնաղ դժոխք, նրա բերանով Իբլիսն է խոսում:
3) Ու կռվի դաշտում Շահի առաջին
   Արին մի անգամ գովքը սիրունի.
   Նրան՝ իր տեսքով, հասակով, ասին,
   Չի հասնի չքնաղ հուրին Իրանի:
4) Պտույտ է գալի ծաղիկ տիրուհին,
   Անցնում է, հսկում սեղաններն ամեն,
   Հորդորում, խնդրում, որ ուրախ լինին,
   Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

30 **Պնդումներից ո՞րն է սխալ «Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ:**

1) Փոքր Միհրը, տեսնելով, որ մի թուխմորուս մարդ իր ձիու վրա մի երիտասարդ աղջիկ է տանում, զայրանում է, կռվում նրա հետ, ինչի պատճառով էլ հոր անեծքով մնում է անմահ ու անժառանգ:
2) Մինչև Խանդութի հետ ամուսնանալը Դավիթը նշանվում է Չմշկիկ Սուլթանի հետ, ումից ծնված աղջիկն էլ հետագայում թունավոր նետով սպանում է հորը՝ Դավթին:
3) Փոքր Միհրը չի կարողանում սպանել Չմշկիկ Սուլթանին՝ հոր վրեժը լուծելու համար, այդ պատճառով փակվում է Ագռավաքարում:
4) Հեռանալով Բաղդադից՝ իրենց ճանապարհին Սանասարն ու Բաղդասարը տեսնում են մի բարակ, բայց զորեղ առու, որի ակունքի մոտ իրենց համար ամրոց են կառուցում:

31 **Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսի խոսքն է.**

«Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դեմ կը կռվեր, տգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրիչի դեմ, ատելությունը սիրո դեմ, կրակը ջուրին դեմ, միտը բանջարեղենին դեմ»:

1) քահանայի
2) լուսանկարչի
3) խմբագրի
4) բանաստեղծի

32 **Ո՞ր տողն է Նահապետ Քուչակի «Ես աչք ու դու լոյս, հոգի՛» հայրենից:**

1) Ժամ-ժամ զիմ դարիպութիւնս Ես յիշեմ ու նստիմ ու լամ
2) Երբ զիս ի քենէ զատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի
3) Ապա յիմ սրտէս ի դուրս՝ յերկըրէ յերկիր թափեցաւ
4) Թուխ ամպն այլ բամպակ արէ՛ք, ի ծաւէն դերձան քաշեցէ՛ք

33 **Ո՞ր բառերի բաց թողած տեղում է կրկնակ բաղաձայն գրվում:**

1. խճու-ի, 2. հետաք-ին, 3. եր-ենցաղ, 4. հո-եկ, 5. ու-ալար, 6. հակըն-եմ, 7. տա-ալուծել, 8. անդո-ագիր

34 **Ո՞ր բառերն ունեն մեկից ավելի ածանց:**

1. ուսուցիչ, 2. բամբակենի, 3. առգրավում, 4. անհիշելի, 5. միջնորմ, 6. վարչական, 7. գիտնական, 8. ապուշություն

35 **Ո՞ր նախադասություններում շաղկապ *չկա* (նախադասությունները կետադրված չեն):**

1. Վաղուց ոչնչից չեմ դժգոհում այլ համակերպվում եմ ամենքի հետ:
2. Նա նկատեց որ մեծ գրողի ասածները հիշում են բոլորը:
3. Մտածում էր ուր գնա ում դիմի այդ խնդրանքով:
4. Յուրաքանչյուր ոք կարող է կասկածել սակայն երբեք չհերքել ուրիշներին:
5. Ուշադիր զննեց արկղի պարունակությունը նախքան սենյակից դուրս գալը:

36 **Ո՞ր նախադասություններում բաղադրյալ ժամանակաձև կա:**

1. Իհարկե, կոշիկն ու արվեստի ստեղծագործությունները տարբեր են, բայց պետք է համոզված լինես, որ բարձրարժեք աշխատանքները երբևէ չեն կորչի:
2. Վարդանը սենյակի աջ անկյունում ծնկի իջավ՝ բարձրաձայն աղոթելով:
3. Մի՛ կանչեք ինձ, հույսի նոր Խոսքերով ինձ մի՛ դյութեք:
4. Այդ խաղատունն է նրան շեղել ճիշտ ճանապարհից:
5. Նա արագ դուրս եկավ քաղաքից՝ քայլելով դեպի դաշտերը տանող խորդուբորդ ճանապարհով:

37 **Ո՞ր նախադասություններում անջատման անուղղակի խնդիր կա:**

1. Աչքդ միշտ կուշտ կմնա, Հոգիդ՝ գոհ քեզ հասած քչից:
2. Ոչ մի ժանիք ինձ չի բաժանի իմ անդուլ դարից:
3. Փոքրահասակներից մի քանիսը, որոնք սովորում էին դպրոցում, գոգնոցով իրենց դեմքը ծածկեցին և պահվեցին ինձանից:
4. Քույր ու եղբայր պատուհանից նայում էին հարևան աղյուսե տան խուլ պարապությանը:
5. Առավոտյան զինվորները սպանում են պահակազորին, բացում երկաթից դարպասները:
6. Վանքի պարիսպներից դուրս կառուցված այդ շինությունը ճանապարհորդների օթևանն էր:

38 **Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:**

1. Լրտեսը՝ խորհրդավոր ուղեկիցը, քարակարկառի արանքից դուրս պրծնելով՝ փախավ դեպի շամբուտը:
2. Թեև թագուհին խնամում էր նրան ամենաքնքուշ հոգածությամբ, և վիրաբույժը կրկնապատկում էր իր ճիգ ու ջանքերը, այնուամենայնիվ արդյունքը հուսադրական չէր:
3. Ես՝ համաձայն մեր նախնական պայմանավորվածության, կմեկնեմ հաջորդ առավոտյան:
4. Թագավորն էր. հրեղեն ձին նստած, ահագին փայլուն թուրը քաշած՝ եկավ և խրոխտ կանգնեց դաշտի մեջտեղում:
5. Ադամը ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր նրան՝ աչքերը չհեռացնելով նրա՝ բոցերի պես ծփծփացող մազերից:

39 **Բառերից քանիսո՞ւմ սղում կա:**

ծաղկաշղթա, հոգյակ, գլխավոր, այգեպան, փախստական, գերություն, ոսկերիզ, վայրկենական

40 **Տրված բառերից քանիսի՞ արմատներից ոչ մեկին *չի* կարող միանալ -*ում* վերջածանցը և բառ կազմել առանց 2-րդ ածանցի:**

հրահրիչ, սրտահույզ, երկնաձիգ, մարզահագուստ, թաղապետարան, երկրաշարժ, բազկաթոռ, դրդապատճառ

41 **Տրված բառաշարքում *ինքը* բառի քանի՞ բառաձև կա:**

ինքնիրեն, իրենով, նրան, իր, ինքնին, ինքնուրույն, իրենցից, ինքնակամ

42 **Նախադասություններից քանիսո՞ւմ է ընդգծվածը ենթակա:**

- Եվ դու ինչո՞ւ չես հարցնում, Թե քո **անունն** ի՞նչ գույն ունի:
- Եկել են, մեր **ինչքը** փախցրել, Մեզ վրա ծախել են մեր իրը:
- Իմ բաժին **աշխարհն** այս մեծ աշխարհում Կերգի շուտով երգն իր կարապի:
- **Բանաստեղծությո՛ւն,** դու պիտի փրկվես Անճարակության համաճարակից:
- Նրանք, որ իմ հացով մեծացան, Չեն ներում դեռ **մեղքերս**:

43 **Նախադասություններից քանիսի՞ դիմաց է սխալ նշված, թե որ հայերենով է այն**:

- Դ-ըռանս առջև կը նըստիմ միշտ տըխրալիր, Լուր կ'ուզեմ վրադ ամեն կռունկէ՝ որ կ'անցնի: - *արևմտահայերեն*
- Դու տեր համորեն երկնի և երկրի, Իսկ ես չեմ իշխում շնչիս ու հոգուս: - *գրաբար*
- Զիմ եարն ամանաթ կու տամ. ի վարդին մէջն պահեցէք. Թէ երթամ ու շուտով դառնամ, զամանաթս ի տէ՛ր հասուցէք: - *միջին հայերեն*
- Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելանէր, Ընդ եղեգան փող բո՛ց ելանէր, Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ: - *գրաբար*
- Ո՜հ, իմ սիրտը կտրատվում է՝ Տեսանելով այսպես սեր Դեպի թշվառ մի հայրենիք, Որ ոտնակոխ եղած էր: - *արևելահայերեն*

44 **Նախադասություններից քանիսո՞ւմ ձևի պարագա կա:**

- Նրա նժույգը դանդաղ գնում էր դեպի ճամբար, որտեղ տեղավորված էր Հռոմի մոտակայքում գտնվող հավաքակայանը:
- Նժույգն իր տիրոջ հետ այնքան էր անցել այդ ուղին, որ անսխալ գիտեր ճանապարհը:
- Ցենտուրիոնները անցուդարձ անելով մտահոգ մտահոգ զրուցում էին:
- Բուռոսը խանդաղատանք էր ապրում այդ տեսարաններից և շնչում ռազմական ճամբարի առնական սուր հոտը:
- Նա ուղևորվեց այնտեղ, ուր ծածանվում էր կապույտ դրոշը. դա հեծյալների ճամբարն էր:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բոլոր հոլովվող որոշյալ դերանունները ենթարկվում են գոյականական *ի* հոլովման:
2. Երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություններում հարաբերական դերանունը լինում է կա՛մ գերադաս, կա՛մ ստորադաս բաղադրիչում:
3. Բոլոր ցուցական դերանունները հոլովվում են գոյականից տարբեր ձևով:
4. ***Ես, դու, նա, ինքը*** դերանունները եզակի թվում ունեն ձևով միմյանցից տարբերվող սեռական և տրական հոլովաձևեր:
5. ***Ով*** դերանվան միայն եզակի թիվը հոլովաձևեր ունի:
6. Ոչ բոլոր փոխադարձ դերանուններն են հոլովվում:

Բ մակարդակ

46 **Ո՞ր նախադասության մեջ ուղղագրական սխալ ունեցող բառ կա:**

1) Ներքնակողմում պատերը տամկացել էին կտուրի կաթելուց, ողջ մթնոլորտը հագեցած էր պատերի, հատակի և առաստաղի մգլածությամբ:
2) Հաղթող գահակալի շքախումբը քաղաքամայր հասավ, երբ գարունն արդեն արբունք էր ապրում:
3) Երկար ժամանակ Հեփեստոսն իր սրտում անտեղված էր պահում իր մոր հանդեպ տածած ցասումը:
4) Հեռուներում նիրհող բարձրաբերձ լեռների շարքում միայն Մասիսի վեհաշուք կատարն էր անհաղորդ տապին:

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) համայն, ամենայն, ամբողջ, բովանդակ
2) չարախոսել, նախատել, զրպարտել, բանսարկել
3) դանդաղ, ծանր, անշտապ, անգայթ
4) խանդաղատանք, փաղաքշանք, գորովանք, սեթևեթանք

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ու*-ի հնչյունափոխություն կա:**

1) փշածառ, արևմտյան, ընչացք, ձվածեղ
2) ընդեղեն, սնգույր, անգթություն, անրջանք
3) հնչակ, մտածել, կատվառյուծ, ըմպան
4) լրագիր, առևտրական, ընչաքաղց, ջրառատ

49 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա:***

1) **մեղանչել**–մեղք գործել, **դիպակ**–որևէ ստեղծագործության հատված
2) **աղորիք**–հացահատիկ աղալու մեքենա, **նյութել**–որևէ դավանության հետևել
3) **երկնուղեշ**–դեպի երկինք ձգվող ճյուղերով, **մորի**–մորենու պտուղը
4) **խայտաբղետ**–զանազան գույներից բաղկացած, **ճրագալույց**–ճրագները հանգցնելը

50 **Ո՞ր շարքի բոլոր բառերում մեկից ավելի արմատ կա:**

1) շրջակա, վրեժխնդիր, որմնասյուն, եռաժանի
2) նյութապաշտ, հազարաբույր, ներաշխարհ, հուշարար
3) հողմահալած, տրամադիր, տիկին, ջերմաչափ
4) հարկատու, մարդախույս, դավանափոխ, գերակշիռ

51 **Ո՞ր նախադասության մեջ հարադիր բայ *չկա:***

1) Ջանք է անում ամեն մինը՝ Շուտով տանի, տիրանա:
2) Հայրը նստած նայում էր նրան և խնդում ուրախությունից, որ մենակ չմնաց:
3) Կա՛նգ առ, հողագո՛ւնդ, Քո պտույտի մեջ, Թող մայրամուտը մի քիչ երկարի:
4) Ամպերը դարձել գթության քույրեր, Ջրվեժի վրա ջուր են շաղ տալիս, Որ ուշքի բերեն:

52 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) երբեք–միշտ, լայն–անձուկ, հավերժ–անընդհատ
2) գժտվել–հաշտվել, չափավոր–ծայրահեղ, չքմեղ–անաչառ
3) կշտամբել–գանահարել, իրազեկ–անտեղյակ, բացասում–հաստատում
4) երաշտային–անձրևային, առատաձեռն–գծուծ, ըմբոստ–հնազանդ

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կապեր կամ կապական բառեր:**

1) առանց, դեպի, միայն, չափ
2) շուրջ, մոտ, ապա, ի փառս
3) ըստ, շնորհիվ, բացի, համար
4) մասին, նման, այսինքն, վրա

54 **Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ *չկա:***

1) Այդ մասին անպայման պետք է հայտնել սպարապետին:
2) Նա հավատարիմ էր մնացել իր ամենօրյա սովորությանը՝ թեյի ժամանակ լրագիր կարդալուն:
3) Այդ հովտի առվից ջուր խմելու էին գալիս եղնիկներ, ուլեր ու գառներ:
4) Մեր դժվարն էլ ինքնիրեն է լինելու, ու քո հեշտն էլ մի պատճառ է հնարելու, որ չլինի:

55 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ *չկա:***

1) Անդրեյը որոշեց, որ Լիզան այդ գիշերն էլ կանցկացնի նույն սենյակում:
2) Իշխան Անդրեյը համբուրեց քրոջը և ասաց, որ նա լացկան է, ինչպես առաջ:
3) Նա պատմում է իրեն պատահած դեպքի մասին և անմիջապես հայտնում, որ իր բոլոր զգեստները թողել է Պետերբուրգում:
4) Նա պնդում էր, որ Անդրեյը միանգամայն փոխվել է, դարձել անճանաչելի, տարօրինակ կերպով ծերացել:

56 **Ո՞ր շարքում են միայն ապառնի ժամանակի բայաձևեր:**

1) բարձրանամ, չես մոռանա, չունեմ
2) մի՛ լարվիր, դառնամ, չանցնենք
3) ցանկանք, մոտեցի՛ր, վազելու էինք
4) կերգենք, չխնայեի, չենք վանելու

57 **Ո՞ր տարբերակում նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Շատ տարիներ են անցել այն օրից. այժմ իմ արածն ինձ որոշ չափով արկածախնդրություն է թվում, և ես գրականության մեջ գտել եմ իմ նշանաբանը:

1) **տարիներ** – ***ի*** հոլովման գոյական, **այժմ** – ժամանակի մակբայ
2) **գրականության** – ***ա*** ներքին հոլովման գոյական, **գտել եմ** – պարզ բայ
3) **իմ** – անձնական դերանուն, սեռական հոլով, **թվում է** – անկատար ներկա, չեզոք սեռ
4) **արածն** – հարակատար դերբայ, որոշյալ առում, **որոշ** – որոշյալ դերանուն

58 **Ո՞ր նախադասության մեջ և՛ չեզոք, և՛ ներգործական սեռի բայեր կան:**

1) Նա ստույգ փաստեր ուներ, որ պարսիկները գալիս են մեծ բանակով և հիմա հասել են դաշտի արևելյան կողմը:
2) Կեսգիշերից անց էր արդեն, երբ վրանի շուրջը ամենքը ննջում էին. անգամ պահակներից ոմանք հենվել էին նիզակներին:
3) Երևում էին նաև վրանների շուրջը անցուդարձող պահակներ՝ գորշավուն վերարկուները հագներին:
4) Այդ ստեղծագործությունը բեմականացնելու իմ մտադրությունն իրագործելու համար ինձ բացառիկ պայմաններ էին տրամադրել:

59 **Ո՞ր բարդ նախադասության մեջ ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կա:**

1) Մինչև վերջին րոպեն միամիտ ծերունին հավատում էր, որ մի օր պատասխանը գալու է:
2) Ես չէի կարծում, որ այսքան ծանր կտանեմ մեր բաժանումը:
3) Այդպես էլ չիմացվեց, թե ինչ եղավ Եգոր Ադամովը:
4) Եվ Սիմոնին թվաց, թե իրենց տնից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը:

60 **Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Օրիորդը ագահորեն ու կլանված լսում էր մարմինը փշաքաղող դյութիչ նվագը որ պատանի երաժիշտը հնչեցնում էր ջութակի լարերով ինչպես քչքչալով դուրս է հոսում պաղպաջուն ջուրը աղբյուրի ակունքից:
2) Նրա առաջ ծառացել էին լուրջ խնդիրներ պետք է բնակարան գտներ նաև աշխատանքի մասին պիտի հոգար:
3) Դարյա Ալեքսեևնան նա շատ անհանգիստ և դյուրազգաց կին էր նույնպես զայրացավ այդ տեսարանից:
4) Բանաստեղծի բնակարանի ընդարձակ պատշգամբը կախված Թիֆլիսի բուսաբանական այգու գեղատեսիլ համայնապատկերի վրա հյուրերի զվարթ հավաքույթների մշտական վայրն էր:

61 **Ո՞ր տարբերակում է ընդգծվածը գերադաս նախադասություն:**

1) Ցոլակը տնքում էր, <u>պոչն ուժգին խփում այս ու այն կողմ</u>, գավակն աջ ու ձախ դարձնում, բայց ոչինչ չէր օգնում:
2) Մի վայրկյան թվում է՝ <u>խորհրդավոր այս կերտվածքը իսկույն նեթ լեզու է առնելու:</u>
3) <u>Յոթանասուն տարեկանի մոտ մարդ է նա</u>, հնարել է տարբեր գործիքներ, որոնք բոլորն էլ օգտակար են:
4) Հենց այդ ժամանակ լրացավ իմ յոթ տարին, և <u>բոլորը միանգամից գլխի ընկան</u>, որ ես մեծ մարդ եմ դառնալու:

62 **Ո՞ր տարբերակում նշված տեսակի ստորոգյալ *չկա:***

1) Խավարն է գերել մեր հոգին այսօր, Եվ լռությունը՝ հավետ մահապարտ: *(պարզ ստորոգյալ)*
2) Դուրս եմ գալիս ես, լուռ թափառում, Մեգն է գրկում ինձ, հողմը՝ օրորում: *(բաղադրյալ ստորոգյալ)*
3) Պայծառ աշխարհում կլինենք մենակ, Ցավ կյանքի մեռնող լույսերից խաբված: *(բաղադրյալ ստորոգյալ)*
4) Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտա՛կ, Թող որ սպանեմ ես էդ հրեշին: *(պարզ ստորոգյալ)*

63 **Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված կա:**

1) Սայլը ցնցվելով ընթանում էր խորդուբորդ ճանապարհով:
2) Ծառերի ճյուղերը գալարվելով փակում էին մարդկանց ճանապարհը:
3) Նա կարող էր տիկնոջ արտաքինի մասին ավելի սիրալիր արտահայտվել:
4) Նա գազազած շուռ եկավ և անմիջապես անհետացավ:

64 **Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:**

1) Հին զենքերի՝ տեգերի, աղեղների և զրահների տեղ զինապահեստներում շողշողում էին ծիրանը, դեղձը, նուռը և խաղողը:
2) Ժամանակի ընթացքում ռազմական նպատակների համար կառուցված ամրոցը, որի պատերի մի մասը ավերվել էր բնական երկրաշարժերից, վերածվել էր շուկայի և ընդարձակ պահեստների:
3) Հին գետի ափերով հարավի արեգակի շողով ու բույրով գալիս էին ուղտերի քարավանները՝ բերելով հարավի քաղցրությունն ու գույնը:
4) Իսկ հիմա ահա կանգնել ես ինձ մոտ Ու նախատում ես ժպիտով տխուր:

65 **Բերված հատվածը միջնադարյան ո՞ր առակից է:**

«Ամբողջ աշխարհի բարեկեցությունն եմ ես, որովհետև ես եմ վաստակում, չարչարվում ու հոգնում, և ապա դու և քո թագավորն ուտում եք: Եթե ես չվաստակեմ, դու և քո թագավորն իսկույն կմեռնենք»:

1) «Եզը և ձին»
2) «Աստղեր և լուսին»
3) «Ոսկի և ցորեն»
4) «Այրի կինն ու իշխանը»

66 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ում ո՞վ է դիմում Վասակ Սյունուն՝ ասելով.**

«Ստրկության ուղիներո՞վ ես ազգը տանում ոգեկան ազատության ու պետության: Ազատության ոչնչացմա՞մբ ազատություն: Ունա՞յն է հույսդ, և իզուր՝ ջանքերդ»:

1) Ներշապուհ Արծրունին
2) Վարդան Մամիկոնյանը
3) Վահան Ամատունին
4) Մովսես Խորենացին

67 **Ո՞ր նախադասություններում սխալ բայաձև կա:**

1. Շուտով հայերը տնկեցին թթենի, նռենի, նշենի, աճեցրին մրգեր ու բանջարեղեն և ցանեցին տեսակ-տեսակ կանաչիներ:
2. Այսպիսի սրտմաշուկ խոհերով համակված՝ մի ժամանակ ես էլ խորհում էի տնից փախնելու, ազգանունս փոխելու մասին:
3. Իզուր մի՛ մտահոգվիր. քեզ թողող չկա, որ կեսգիշերին տուն գնաս:
4. Գլխի ահավոր ցավը փոքր-ինչ թուլացել էր և հիմա միայն ժամանակ առ ժամանակ էր հիշացնում իր գոյությունը:
5. Հենց նորություն ունենամ, կկապնվեմ քեզ հետ և կհայտնեմ մանրամասները:

68 **Ո՞ր մտքերն են հակասում շարադրանքի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Եգիպտոսի Լուքսոր քաղաքի մոտ գտնվում է Արքաների հովիտը՝ մեծ և նշանավոր փարավոնների դամբարանատեղին: Այստեղ է նաև Թութանհամոնի դամբարանը, որը, հակառակ նրա, որ պատկանում է բոլորից կարճ իշխած և փառահեղ գործերով աչքի չընկած փարավոնի, ամենանշանավորն է, քանի որ ամենալավն է պահպանվել:

1922 թ. անգլիացի հնագետ Հովարդ Քարտերի գլխավորությամբ Եգիպտոսում՝ Նեղոսի ձախ ափին, երկարատև որոնումներից հետո գետնի տակից լույս աշխարհ հանվեց Թութանհամոնի քարակոփ դամբարանը: Հնագետը տեսականորեն հաստատել էր դրա գոյությունը, սակայն դամբարանը չէր հայտնաբերվում: Երբ ամեն ինչ հիմնովին ստուգելուց հետո Քարտերը հուսահատվեց և որոշեց դադարեցնել աշխատանքները, հանկարծ բանվորներից մեկը հանդիպեց մի քարե աստիճանի, և պարզվեց, որ իրենք գտնվում են ստորերկրյա դամբարանի քողարկված մուտքի մոտ: Առաջնային մաքրումից հետո բացվեց մի արբատաշ պատ՝լավ պահպանված պատկերներով: Դա դամբարանի մուտքն էր՝ կնքված ամենանշանավոր փարավոնների կնիքներով և Եգիպտոսը թշնամիներից պաշտպանող Անյուրիս կոչվող շան դիմապատկերով:

Գերեզմանը ծածկող արվեստի գործերը այնքան շատ էին, որ դրանք ցուցակագրելու և Կահիրեի եգիպտական թանգարան տեղափոխելու համար պահանջվեց տասը տարի: Բանն այն է, որ ի տարբերություն շատ այլ փարավոնների դամբարանների՝ այս մեկը նախորդ դարերում չէր հայտնաբերվել Եգիպտոսի բնակիչների կողմից ու չէր թալանվել: Թութանհամոնի ոսկե դիմակը համաշխարհային ճանաչում ստացավ՝ որպես Հին Եգիպտոսի խորհրդանիշ:

Ճակատագրի հեգնանքով Թութանհամոնը իրականում եղել է Եգիպտոսի առավել նվազ կարևորություն ունեցող փարավոններից մեկը, սակայն մահվանից հետո դարձել է ամենանշանավորներից մեկը: Նա փարավոն դարձավ ինը տարեկանում և կառավարեց ընդամենը ինը տարի: Շատ հավանական է, որ նրա օրոք իրականացված այնպիսի կարևոր գործողություններ, ինչպիսիք են եգիպտական աստվածների պանթեոնի ստեղծումը և բազմաթիվ տաճարների կառուցումը, նախաձեռնվել է ոչ թե Թութանհամոնի, այլ նրա խորհրդատուների կողմից:

1. Թութանհամոնի կառավարման շրջանում Եգիպտոսը հարստացել է մի շարք ճարտարապետական կոթողներով, որոնցից բոլորը, բացի աստվածների պանթեոնից, կառուցվել են նրա նախաձեռնությամբ:
2. Թութանհամոնի դամբարանի գանձերը պահվում են Լուքսորի մոտ գտնվող Արքաների հովտում:
3. Դամբարանի մուտքը հայտնաբերվեց շնորհիվ նրա, որ բանվորներից մեկը նկատեց Անյուրիս կոչվող շան դիմապատկերը:
4. Թութանհամոնի՝ Եգիպտոսի ամենահայտնի փարավոններից մեկը դառնալը պայմանավորված է ոչ թե նրա գործունեությամբ, այլ ուրիշ հանգամանքներով:
5. Թութանհամոնի դամբարանը փնտրելիս Քարտերը որոշել էր դադարեցնել աշխատանքները, սակայն մի պատահականություն օգնեց դամբարանը գտնելուն:

69 **Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության տարբերակներից որոնցո՞ւմ սխալ կա:**

Գարդմանա իշխանը՝ Սևադան, խորազնին հայացքը ուղղեց իր հոգու ներսը, որպեսզի այնտեղ փնտրի Մարզպետունու խորհրդավոր ակնարկի պատասխանը, սակայն ավելի վայելուչ համարեց լռելը:

1. **պատասխանը**-ենթակա
2. **լռելը** – ուղիղ խնդիր
3. **Սևադան**-ենթակա
4. **խորազնին** – ձևի պարագա
5. **իր** – հատկացուցիչ
6. **հոգու ներսը** – տեղի պարագա

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Պարզ համառոտ նախադասության մեջ բացի գլխավոր անդամներից որևէ ուրիշ բառ չի կարող լինել:
2. Հետևյալը բարդ նախադասություն է. ***«Դալուկ դաշտեր, մերկ անտառ, մահացողի տխուր կյանք»:***
3. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններից մեկում ենթական և ստորոգյալը միաժամանակ կարող են զեղչված լինել:
4. ***«Աշուն էր՝ տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ»*** նախադասությունը անդեմ է:
5. Ե՛վ ենթակա, և՛ ստորոգյալ ունեցող նախադասությունները լիակազմ են:
6. Անդեմ նախադասությունները, ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության, լինում են երկու տեսակի՝ բայական և անվանական: